



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
Ա.Ս. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745
E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ ՖՐԵՉՆՈՅԻ
Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՅ 109ԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻ

Կիրակի, 24 Յունուարին, Ֆրեզնոյի Ս. Երրորդութիւն Մայր եկեղեցւոյ հիմնադրութեան 109րդ տարեդարձին առիթով, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Ս. Մուշեղ Արք. Մարտիրոսեան պիտի ըլլայ Ֆրեզնոյի մեր ծխական համայնքին հետ:

Առաջնորդ Սրբազանը Ս. Պատարագ պիտի մատուցանէ, իր պատգամը պիտի փոխանցէ եւ պիտի կատարէ սարկաւազական ձեռնադրութիւն: Ս. Պատարագէն ետք, Առաջնորդ Սրբազանը պիտի նախագահէ հոգաբարձութեան կազմակերպած տարեկան ճաշկերոյթին, որ տեղի պիտի ունենայ եկեղեցւոյ սրահին մէջ:

Բարի աւանդութիւն է, որ հոգաբարձութիւնը այս առիթով գնահատանքի արժանացնէ եկեղեցւոյ ու գաղութին ծառայողներ, իսկ եկեղեցւոյ հովանիին տակ գործող յանձնախումբերը իրենց տարբեր ձեռնարկներէն ապահոված հասոյթը կը փոխանցեն հոգաբարձութեան:

PRELATE TO CELEBRATE DIVINE LITURGY ON THE
109TH ANNIVERSARY OF HOLY TRINITY CHURCH OF FRESNO

This weekend, the Fresno parish community will celebrate the 109th anniversary of Holy Trinity Church.

H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will travel to Fresno on this occasion, where he will celebrate Divine Liturgy and deliver the sermon on Sunday, January 24th, 2010. The Prelate will also conduct the ordination of a deacon during the service.

The 109th anniversary banquet will be held following Divine Liturgy in the church hall. The Prelate will preside over the banquet and deliver his message and blessings.

**ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՏԻԿՆԱՆՑ ՕԺԱՆԴԱԿ ՄԱՐՄԻՆԸ
ԿԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԷ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ-ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ ՄԸ
ՀԱՅ ԿՆՈՋ ՏԱՐՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ**

Նկատի ունենալով, որ Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Աթոռի գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս 2010 տարին հռչակած է Հայ Կնոջ Տարի, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Սրբազան Հօր հովանաւորութեամբ՝ Ազգային Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմինը այս տարուան ընթացքին պիտի կազմակերպէ շարք մը ձեռնարկներ, պատշաճօրէն ընդառաջելու համար հայրապետական պատգամին:

Առաջին ձեռնարկը դասախօսական-ճաշի հանդիպում մըն է, որ տեղի պիտի ունենայ Հինգշաբթի, 28 Յունուարին, կեսօրուան ժամը 12ին, Ազգային Առաջնորդարանի «Տիգրան եւ Չարուհի Տէր Ղազարեան» սրահին մէջ: Պիտի բանախօսէ ծանօթ գրագետ ու մտաւորական Տիկին Սօնա Չէլթեան, իբրեւ նիւթ ունենալով «Հայ Կնոջ դերը Հայ Կեանքին մէջ, անցեալին եւ այսօր»: Դասախօսութեան պիտի ընկերանայ գեղարուեստական սեղմ յայտագիր մը, ապա, Առաջնորդ Սրբազանը պիտի արտասանէ իր օրհնութեան ու սրտի խօսքը:

Յաւելեալ տեղեկութեանց համար, կարելի է հեռաձայնել Ազգային Առաջնորդարան (818-248-7737):

**LADIES AUXILIARY TO HOST A LITERARY LUNCHEON IN
CELEBRATION OF THE “YEAR OF THE ARMENIAN WOMAN”**

In response to the proclamation by H.H. Catholicos Aram I of 2010 as the “Year of the Armenian Woman” under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, the Prelacy Ladies Auxiliary Guild will organize a number of events throughout the year to celebrate the role and contributions of the Armenian woman.

The first event is a literary luncheon that will take place at noon on Thursday, January 28th, 2010, at the Prelacy “Dikran and Zarouhie Der Ghazarian” Hall. Renowned author and scholar Mrs. Sona Zeitlian will speak on the topic “The Role of Armenian Women in Armenian Life: Past and Present”. A cultural performance will also take place.

Contact the Prelacy at 818-248-7737 for further information.

ՎԵՐՋԻՆ ՕԾՈՒՄ՝ Տ. ԱՆՈՒՇԱԲԱՆ Ա. ՔՅՆՅ. ԱՐԹԻՆԵԱՆԻ

Չորեքշաբթի, 13 Յունուարի երեկոյեան, մեր Թեմը կորսնցուց մեր եկեղեցւոյ բազմավաստակ ծառայողներէն՝ Արժ. Տ. Անուշաւան Ա. Քհնյ. Արթինեանը:

Երեքշաբթի, 19 Յունուարի առաւօտուն, Կլենտէյլի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ, յընթացս Ս. Պատարագին, տեղի ունեցաւ վախճանեալ Տէր Զօր Վերջին Օծման Կարգը, հանդիսապետութեամբ եւ կատարողութեամբ Թեմիս բարեջան Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի: Արարողութեանց ներկայ էին հանգուցեալ Տէր Զօր ընտանեկան պարագաները, Ազգային Վարչութեան անդամներ, Զ.Ս.Ը.Ս.ի Կեդրոնական եւ Շրջանային Վարչութեանց անդամներ, յարակից միութիւններու ներկայացուցիչներ եւ հոծ բազմութիւն մը:

Ս. եւ անմահ Պատարագը մատուցեց Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան: Քահանայ հայրերը հերթաբար եւ երկիւղածութեամբ կանգնեցան հանգուցեալ Տէր Զօր դագաղին վերեւ եւ Աստուածաշունչէն ընթերցեցին:

«Ողջոյն»էն առաջ, Առաջնորդ Սրբազան Զայրը, շրջապատուած միաբան եւ քահանայ հայրերով, հանդիսաւորապէս կատարեց Վերջին Օծման Կարգը, օծելով հանգուցեալ Տէր Զօր ճակատն ու աջը:

Սրբազան Զօր դամբանականէն առաջ, ընթերցուեցաւ Արեւելեան Թեմի Առաջնորդ՝ Բարձր. Տ. Օշական Արք. Զօլոյեանի ցաւակցագիրը այս առթիւ:



Իր դամբանական խօսքին մէջ, Առաջնորդ Սրբազան Զայրը վեր առաւ հանգուցեալ Տէր Զօր շուրջ 50 տարիներու նուիրեալ ծառայութիւնը Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան գանազան Թեմերուն մէջ, սկսելով Յունաստանի Սելանիկ քաղաքէն մինչեւ Ամերիկայի Արեւելեան Թեմ ու ապա Արեւմտեան Թեմ: Վկայեց անոր աշխոյժ կեանքին, լաւատես ու դրական վերաբերումին եւ համեստ ու սիրուած նկարագրին մասին: Սրբազանը Զոգեւորականաց Դասուն, Կրօնական Ժողովին եւ Ազգային Վարչութեան անունով իր վշտակցութիւնը եւ խոր ցաւը յայտնեց

Երեցկին Սալբի Արթինեանին, գաւակներուն՝ Սթիւի, Խաժակի եւ Զուրիի եւ ընտանեկան պարագաներուն ու բոլոր հարազատներուն:

Ս. Պատարագէն եւ Վերջին Օծման արարողութենէն ետք, Կլենտէյլի գերեզմանատան մէջ կատարուեցաւ թաղման արարողութիւնը:

ARCHPRIEST FR. ANUSHAVAN ARTINIAN LAID TO REST

As reported previously, on Wednesday, January 13th, 2010, the Prelacy lost Archpriest Fr. Anoushavan Artinian.

On the morning of Tuesday, January 19th, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, clergy members, the late Rev. Anoushavan's family, Executive Council members, Homenetmen Central and Regional Executive

members, representatives of sister organizations and a large number of faithful gathered at St. Mary's Church for the Funeral Mass and Extreme Unction.

The funeral mass was celebrated by Very Rev. Fr. Muron Aznikian, during which clergy members solemnly and by turn read passages from the Bible. The Prelate then conducted the Extreme Unction ceremony, anointing the decedent's forehead and hand.

Prior to the Prelate's remarks, the letter of condolence sent by H.E. Archbishop Oshagan Choloyan, Prelate of the Eastern United States, was read.

The Prelate remembered Fr. Anoushavan as a good-natured and humble man, extolling his five decades of service within the Prelacies of the Catholicosate of the Great House of Cilicia, from Greece, to the Eastern United States, and finally at the Western Prelacy.

On behalf of the clergy order and Religious and Executive Councils, the Prelate extended his sympathies to Yeretsgin Salpi Artinian, children Steve, Khajag, and Houri, and family members.

The burial took place at Forest Lawn following the service.

ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ ԼՈՍ ԱՆՃԵԼՍԻ ԿԱԹՈՂԻԿԷ ԵԿԵՂԵՑՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

Շաբաթ, 23 Յունուարին, Կաթողիկէ համայնքի Լոս Անճելլոսի «Our Lady of Angels» տաճարին մէջ տեղի պիտի ունենայ Ս. Պատարագի իւրայատուկ արարողութիւն մը, նուիրուած՝ Կեանքին: Այս արարողութիւնը տարեկան հերթականութեամբ կը կատարուի, վեր առնելու համար մարդկային կեանքի արժէքը, նկատի ունենալով նախաձեռնողեան շրջանի կեանքը եւս:

Կաթողիկէ համայնքի առաջնորդ Կարտինալ Մահոնի հրաւեր ուղղած էր Առաջնորդ Սրբազանին, մասնակից ըլլալու այս արարողութեան: Յանուն Առաջնորդ Սրբազան Զօր, Զոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիւմեան ներկայ պիտի ըլլայ ու աղօթակից ներկայ հոգեւորականներուն:

ANNUAL RESPECT LIFE MASS AT THE CATHOLIC ARCHDIOCESE

Each year, the Catholic Archdiocese of Los Angeles holds their Annual Respect Life Mass to remember lives lost to abortion. H.E. Cardinal Roger Mahony has extended an invitation to the Prelate to participate in the ceremony; however the Prelate will be in Fresno on that day.

Very Rev. Fr. Barthev Gulumian will attend on his behalf.
